

ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 8

1 Օգոստոս 1891



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՆ

ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

1891

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1. ՆՈՐ ՇՐՋԱՔԵՐԱԿԱՆ ԼԵՒՈՆԻ ԺԳԻ Գործադրաց վիճակին վրայ: (Շար.)— Թարգմ. Գեորգ Վ. Թերզիազեան:
2. ՆՈՐՎԵԿԵԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի Հիսսապիս բեւեռ. — Անրոն Թոֆեան:
3. ՄԱՐՄՆԱՄԱՐՁ Ի ՊԷՏՍ ԱՄԵՆԵՑՈՒՆ (Շարայարեւի) . — Յովն. Վ. Անեֆեան:

Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Երկրորդ Տարի

ԹԻՒ Տ

4 Օգոստոս 1894

ՆՈՐ ԵՐԶԱԲԵՐԱԿԱՆ

ԼԵԻՈՆԻ ԺԳ. Ի

Գործաշորաց վիճակին վրայ



(Շարայարութիւն (*) եւ վերջ)

Հուսկ ապա ներկայ խնդրոյս լուծման կրնան աջակցիլ նոյն իսկ տեարք եւ գործաւորքն, 'ի ձեռն այնպիսի հաստատութեանց, որոնցմով թէ պատշաճօրէն օգնութիւն կը մատուցուի կարօտելոց եւ թէ երկուքին դասակարգեր իրարու աւելի կը մերձենան: Ահաւասիկ այս հաստատութեանց կարգէն են փոխադարձաբար իրարու օժանդակող ընկերութիւնքն՝ բազմաթիւ առանձնական ապահովարար հաստատութիւնք՝ սահմանեալք ինամուլու գործաւորները, այրիները, որբերը, ձախորդութեանց, խօթութեանց եւ այլ մարդկային դժբախտ արկածից մէջ. երկու սեռի սղայոց, պատանեկաց եւ չափահասներուն համար պաշտպանութեան ընկերութիւններ: Այլ արուեստաւորաց եւ գործաւորաց ընկերակցութիւններն առաջին տեղը կը զբաւենն եւ գրեթէ միւս-

(*) Տե՛ս Պատիւի Բ. Տարի, Թիւ 6, էջ 155:

ներն յինքեանս կը բռնակահան: Աս մեր նախնիս բայայայտ տեսնուեցան այնպիսի ընկերակցութեանց մեծամեծ օգտակարութիւնները. ոչ միայն 'ի շահ եւ յօգուտ արուեստաւորաց, այլ՝ ինչպէս կը վկայեն շատ յիշատակարաններ, նաեւ 'ի յարգ եւ 'ի բարգաւաճումն արուեստից: Ստոյգ է որ գատտիարակութեան յառաջադիմութիւնը, նոր սովորոյթը եւ յարաձուռ պիտոյք կը սահանջեն որ այս ընկերակցութիւնը ներկայ ժամանակիս հանդամանաց պատշաճ յարգարուին: Հաճութեամբ կը տեսնուք որ ամենուրեք սոյնօրինակ ընկերակից համախմբութիւնք կը կազմուին, ըլլայ գործաւորներէն միայն, ըլլայ անոնցմէ եւ տէրերէն 'ի միասին, եւ ցանկալի է զի թուով եւ գործօնէութեամբ ածին զարգանան: Եւ թէպէտ ոչ միանգամ եւեթ անոնց վրայ խօսք ըրած եմք, սակայն հաճոյ է մեզ միւսանդամ կրկնել յայտմ վայրի թէ սոքին կարի պատշաճական են եւ իրաւունք ունին յօրինուելու, եւ թէ ինչ բարեկարգութիւն գործածելու եւ ինչ ճամբայ բըռնելու են:

Անձին տկարութեան զգայունքը կը մղէ զմարդ իրենին միացնելու նաեւ այլոց օգնականութիւնը: Ս. Գլորը կ'ըսէ. «Լաւագոյն է որ երկոքին միասին ըլլան քան քէ մի. գի օգտակար է նոցա միութիւնն: Եթէ մին իյնայու, ըլլայ՝ մեկայը նեցուկ կըլլայ: Վա՛յ անոր որ միմակ է. գի երբ իյնայ, ջունի մեկը որ գիկքը վերցունէ (1): Եւ այլուր, «Եղբայր յեղբօր օգնեալ, իբրեւ գրադար ամուր» (2): Այս ընածին միտութեան ազդումն ինչպէս զմարդ կը մղէ ընդհանուր ընկերութեան, նոյնպէս ուրիշ մասնական ընկերակցութեանց, որք թէեւ փոքրիկ եւ թերակատար, այլ ճշմարիտ ընկերութիւններ են: Այս երկուքին մէջ մեծ խորոց կայ մերձաւոր վախճաններուն տարբերութեանը պատճառաւ: Քաղաքական ընկերութեան պատճառը ընդհանուր է, այնու գի, յայնմանէ կախումն ունի հասարակաց բարին, որուն ամեն եւ իւրաքանչիւր քաղաքացիք պարտուպատշաճ համեմատութեամբ իրաւունք ունին: Ստոր համար հասարակաց կը կոչուի, զի նովաւ «Մարդիկ հաղորդին միմեանց եւ յարգարեն գմի տերութիւն» (3): Ընդհակառակն միւս ընկերակցութիւններն որ 'ի ծոց նորա ծը-

(1) Եզիէտիասոսի. Դ. 9-12.

(2) Առակ. Ժ. 19.

(3) Ս. Թովմ. Ընդդէմ հակառակորդաց Ասորոսածէլէն պաշտամանն եւ կրօնից. Գլ. Բ:

նունը կ'առնուն, կ'ըրուին և ևն առանձնակն, որովհետև իբրև վախճան կը զիտն առանձնական և ընկերաց օգուտն միայն. զի սոսկական ընկերութիւնն այն է, զոր յօրինեն 'ի գործել զորձ առանձնական, որպէս յորժամ երկու կամ երեք ի մի միաբանին, զի սուրբաւորիկ շահո 'ի միասին արասցեն»(1):

Արդ թէև այս առանձնական ընկերակցութիւնը տէրութեան մէջ են, և անոր մասերը կը կազմին, այսու հանդերձ ընդհանրապէս և բազարձակաբար խօսելով, տէրութիւնն անոնց կազմութիւնը չի կրնար խափանել: Որովհետև միաբանութեան իրաւունքը մարդ 'ի բնութենէ ունի. խօս տէրութեան պարտքն է բնութեան իրաւունքը պաշտպանել և ոչ ընաջինջ առնել. և այս ընկերակցութիւնները արդէլով հակասութեան մէջ կ'իջնայ. որովհետև նոցին սկզբունքն՝ մարդկան ընկերային բնութիւնն է: Կը պատահին սակայն դէպք յորս արդէն արդարացի կ'ըլլայ և 'ի պարտույր երբ առանձնական ընկերակցութիւնը իրենց առջեւ կը դնեն այնպիսի նպատակ մը, որ հակասակ է համեստութեան, արբարութեան, ընկերական ապահովութեան, կոտախրութիւնը ըստ օրինի կը դիմադրէ նոցա, կամ խափանելով նոցին կազմակերպութիւնը և կամ լուծելով այլ մեծաւ զգուշութեամբ պէտք է շարժիլ ի մասին քաղաքացւոց իրաւունքները առան չի կոխելու և ընդ երևութիւ հասարակաց բարեոյ՝ անհատից մնաս չի հասցնելու համար: Որովհետև յայնժամ միայն պարտք է հնազանդիլ օրինաց՝ երբ ուղիղ բանի և Աստուծոյ յաւիտեական օրինաց հետ կը համաձայնին (2):

Հոս մեր միտքը կուգան այնքան ընկերակցութիւնը և միաբանութիւնը և կարգը կրօնաւորականը, զորս ծնան Եկեղեցւոյ իշխանութիւնն և հաւատացելոց բարեպաշտութիւնն. և պատմութիւնը 'ի յայտ կ'ածէ թէ ատնցմէ մարդկային ազգը ինչպիսի օգուտ քաղած է մինչև ցայսօր: Այնպիսի ընկերութիւնը, նկատելով դանձր նաև բանական լուսով միայն, ըստ իրենց համեստ վախճանին, բնութեան իրաւամբ յայտնապէս օրինաւոր

(1) Ս. Թովմ. Ընդդէմ հակառակորդաց ևն.

(2) «Մարդկային օրենք յայնժամ եւեթ յօրինաց սակի են, յորժամ ընդ ուղիղ բանի մեքանիցին, եւ այսպէս յայտ է լինի յառեղենական օրինաց առնան զժամբոսմն: Այլ յորժամ հակառակն կայցեն բանին, աւարելչոյ կոչին օրենքն, եւ այսպէս ոչ օրենք, այլ բռնութիւնն էմն են»: (Ս. Թովմ. Բովանդակ. Աստուածաբ. Ա.—Բ, Խնդ. ԺԳ. յօր. Գ.)

ենս Իսկ կրօնից հետ ունեցած յարաբերութեան պատճառաւ, Եկեղեցւոյ իշխանութեան ներքեւ ենս Ռուսոյ տէրութիւնը չի կրնար ահոնց վրայ ձեռնհասութիւն մը ունենալ եւ անոնց մատակարարութիւնը իրեն դրաւել, այլ ընդհակառակն իր պարտքն է զանոնք մեծարել, պահպանել եւ 'ի հարկին' պաշտպանել: Այլ սրչափ այլազգ գործուեցաւ, մանաւանդ մեր ժամանակները: Ի բազում տեղիս եւ բազմապիսի անիրաւութեամբ տէրութիւնը այս տեսակ հասարակութեանց իրաւունքը բռնաբարեց, ենթարկելով զանոնք քաղաքական օրինաց, եւ բարոյական իրաւունքներէն զրկելով, եւ իրենց ստացուածքներէն մերկացնելով: Այս ստացուածոց վրայ իր իրաւունքն ունէր Եկեղեցին, իւրն իւրաքանչիւր ընկեր, եւ նոյնպէս անոնք որ զայնս վախճանի մը համար որոշեր էին. կամ անոնք՝ որոց յօգուտ սահմանուեր էին: Հետեւաբար չենք կարող ժոյժ ունել եւ կ'ողբամք այդպիսի անիրաւ եւ վնասակար յափշտակութիւնները. մանաւանդ զի այսպիսի ժամանակի մը մէջ, յորում բարձրաձայն կը քարոզուի ընկերակցութեան իրաւունքը, կը տեսնենք թէ խաղաղատէր եւ ամենուրեք օգտակար Կաթողիկէ միաբանութիւնք կը խափանուին, մինչդեռ այս իրաւունքը առատօրէն կը շնորհուի կրօնքի եւ տէրութեան պէմ ակն յայտնի դաւաճանող մարդիկներու:

Յիրաւի խումբ խումբ ընկերակցութիւններ, մանաւանդ գործաւորաց, այսօրուան օրս բազմանալու վրայ են ամեն ժամանակէ աւելի, ինչորոշ չի պատկանիր ատոնց շատերուն ծագումը, վախճանն ու միջոցները որոնել: Այլ ընդհանուր կարծիք է, եւ այն բազում ապացոյցերու վրայ հիմնեալ, թէ՛ յաճախ Քրիստոնէական ոգւոյ եւ հասարակաց բարեոյն հակառակ յօրինուածով ծածուկ գլուխներէն կը կտուալարուին. եւ ճարտարութեանց ու գործառնութեանց մենավաճառութիւնը 'ի ձեռս բերելով, իրենց հաղորդակից չեղողները կը հարկադրեն կարօտութեամբ զպատիժն լուծանել:—Իրաց սոյն վիճակին մէջ քրիստոնէաց գործաւորներն նոյն երկու միջոց ունին, կամ կրօնից վնասաբեր ընկերութեանց գրուել եւ կամ իրենք իրենց յատուկ ընկերութիւններ կազմել եւ այսու ոյժերնին միացնել եւ անվիշեր համարձակութեամբ այնչափ անիրաւ եւ անհանդուրժելի ճնշումէ զանձինս թափել: Արդ սկ կրնայ վարանել թէ այս երկրորդն ընտրելն հարկ է նոյն՝ որք մարդուն ծայրադոյն բարին չեն ուզեր 'ի վտանգի կացուցանել:

Յոյժ արժանի գովասանաց են բազումք ի մերայնոց, որք

ժամանակաց պահանջմանց քաջ իրագրել ըլլալով, ամենայն ջան ի մէջ կ'առնուն գործաւորաց վիճակն ըստ պատշաճի բարւոքելու համար, եւ անոնց դասն ի ձեռս առեալ, կը ճգնին նոցին անհատական եւ ընտանեկան բարօրութիւնն աճեցնել, կանոնաւորել՝ ըստ արդարութեան, աշխատաւորաց ու տէրանց յարաբերութիւնները. կենդանի եւ խորարմատ պահպանել ի սոսա եւ ի նոսա գյուշ պարտուց եւ զպահպանութիւն աւետարանական պատուիրանաց, որք զողին ամեն տեսակ ծայրայեղ անկարգութենէ յետոս կասեցնելով, կ'առաջնորդէն զայն ի չափաւոր բարեխառնութիւն, եւ անձանց ու իրաց ամենամեծ տարբերութեամբն հանդերձ, ներդաշնակութիւնը կ'ապահովին ի քաղաքային ընկերութեան: Այսու վախճանաւ կը տեսնեմք որ կաճառներ կը կազմուին, յորս արք հոյակապք կը հազորդեն իւրարու իրենց զազախարներն, ի մի կը զուգորդեն ոյժերնին, եւ ձեռք առնուելիք ամենալաւ միջոցներու վրայ կը խորհրդակցին: Այլք գուն կը գործեն պատշաճապէս ի մի խմբելու զանազան գործաւորական կարգերը. խորհրդով եւ միջոցներով կ'օգնեն. անոնց համար համեստ ու շահաւէտ աշխատութիւններ կը հայթայթեն: Եպիսկոպոսունք քաջաբերութիւն կը մատուցանեն եւ խրախոյս. եւ ընդ նոցա հսկողութեամբ աշխարհիկ եւ վանական կղերէն շատերն ընկերաց հոգեւոր բարւոյն վրայ կը հսկեն մեծաւ եռանդեամբ: Չեն պակսիր վերջապէս մեծատուն կաթողիկոսք, որք զուցես միաբանելով գործաւորաց հետ, չեն խնայեր ծախուց՝ հիմնելու եւ ամեն տեղ ծաւալելու այն ընկերութիւններն որք գործաւորին օգնական ըլլան ոչ թէ միայն աշխատութեամբ իր այժմու պիտոյից հայթայթմանաց, այլ նաեւ յապաքն պատուաւոր եւ անդորր հանդիստ մը պատրաստելու:— Այնքան եւ այնպէս յօժարակամ ճգանց հասարակաց բարւոյն համար յառաջ բերած օգուտներն այնպէս յայտնի են որ եւ ոչ իսկ անոնց վրայ կարեւոր է խօսիլ: Աստի կը խրախուսիմք ապագային համար զեռ լաւապէս բաներ յուսալու, միայն թէ այնպունակ ընկերութիւնք ծաղկին եւս քան զեւս, ու իմաստնաբար կարգաւորեալ ըլլան: Տէրութիւնն պաշտպան կենայ քաղաքացեաց այս օրինաւոր ընկերակիցներուն, առանց սակայն միջամտելու անոնց ներքին կազմակերպութեան եւ բարեկարգութեան. որովհետեւ կենսական շարժումն կը ծագի ներքին սկզբունքէն եւ արտաքին մղմունք զայն կը խղզեն:

Այս իմաստուն կազմակերպութիւնն եւ բարեկարգութիւն

անհրաժեշտ հարկաւոր է՝ գործողութեան եւ վախճանի միութեան համար: Ձի եթէ քաղաքացիք ունին՝ ինչպէս արդեամբ իսկ ունին ազատ իրաւունք ընկերակցելու, պէտք է նաեւ որ նոյնպէս իրաւունք ունենան իրենց ընկերակցութեանց համար ընտրելու այն յօրինուածութիւնը զոր աւելի յարմար եւ յանկաւոր կը դասեն իրենց վախճանին:

Չեմք կարծեր թէ կարելի ըլլայ սահմանել հաստատ եւ ճիշդ կանոններով այս յօրինուածութեան մանրամասնութիւններն, զի առ առաւելագլէս պէտք է որ որոշուի այս ամենայն եւ հաստատութիւն առնու ըստ ընդարդոյ բերման իւրաքանչիւր ժողովրդեան, ըստ փորձոյ եւ գործածութեան, ըստ որպիսութեան եւ շահարբութեան աշխատութեան, ըստ զարգացման վաճառականութեան, եւ ըստ այլոց եւս հանգամանաց՝ զորս պէտք է ՚ի նկատի առնու խոնկեմութիւնը: Ըստ էութեան կրնայ իբրեւ ընդհանուր եւ հաստատուն կանոն դրուել թէ գործաւորաց ընկերակցութիւններն այնպիսի պէտք է ըլլան եւ կառավարուին, որ կարենան մատակարարել ամենայարմար միջոցներն ձեռք բերելու սոյն վախճանը, որ կայանայ յայսմ թէ իւրաքանչիւր ընկերակից ըստ կարելւոյն մեծագոյն բարօրութիւն ստանայ ՚ի նիւթականին, սնտեակականին եւ ի բարոյականին: Նոյնպէս բացայայտ է թէ իբրեւ կէտ նպատակի ունենալու է գլխաւորաբար կրօնական եւ բարոյական կատարելութիւնը, որուն պէտք է ուղղել ամբողջ ընկերական բարեկարգութիւնը: Ապա թէ ոչ տոյնպիսի ընկերակցութիւնք իրենց վախճանէն կ'օտարանային, եւ անկրօն ընկերակցութիւնները չէին գերազանցելու: Եւ ինչ բանի կը ծառայէր գործաւորին ընկերութեան մէջ գտնել զկարեւորն ՚ի բարւոք կեալ, եթէ հոգին իրեն սեպհական մտւեղին պակասութեամբ ՚ի կորուստ մասնուէլու վտանդին մէջ գտնուէր: «Ձի՞նց օգտիցի մարդ, եքի գաշխարհս ամենայն շահեսցի եւ գանձն իւր տուածեսցի» (1): Ասիկայ ըստ վարդապետութեան Յիսուսի Քրիստոսի, Քրիստոսեայն հեթանոսէն զատող զրոյնն է. «Չայդ ամենայն հեքանոսք խնդրեն . . . խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ եւ զարդարութիւնն նորա, եւ այդ ամենայն յաւելցի ձեզ» (2):

Սկիզբն առնելով ուրեմն յԱստուծոյ՝ մեծ մաս մը յատկացուի կը-

(1) Մատթ. Ժ. 26.

(2) Մատթ. 2. 32—33.

րօնական դատարարակութեան, որպէս զի իւրաքանչիւր ոք ճանչնայ իր պարտքերն առ Աստուած, լաւ գիտնայ հաւատալիքն, յուսալիքն եւ ընելիքն փրկուելու համար, եւ աղէկ պատրաստեալ ըլլայ եւ յակաստանի ընդդէմ այժմեան մոլորութեանց եւ ապականիչ հրապուրանաց: Քաջալերուի գործաւորն եւ յորդորուի 'ի պաշտօն Աստուծոյ եւ 'ի սէր բարեպաշտութեան, եւ մանաւանդ 'ի պահպանութիւն տօնական աւուր: Սորվի մեծարել եւ սիրել զՅիւզղեցին, զՄայրն մեր ամենեցուն. ինչպէս նա եւ հնազանդիլ նորին պատուիրանաց. յաճախել խորհրոց՝ որք Աստուածային միջնորդներն են արդօրութեան եւ սրբութեան:

Ընկերական կարգաց հիմունքն 'ի կրօնս հաստատելով, այնուհետեւ ընկերաց փոփոխակի յարաբերութիւններն կարգաւորելու ճամբայ կը բացուի. նոյա միաբանակեցութեան անդորրութեանը եւ սնտեսական բարօրութեան համար: Պաշտօններն հատարակաց օգտին պատշաճ կերպով բաշխուին, եւ այնպիսի ներդաշնակութեամբ որ զանազանութիւնը չի մնասէ միութեանս: Մեծագէս կարեւոր է որ այս պաշտօնները լաւ բաշխուին եւ բացայայտ ճշդուին, որպէս զի ընկերներէն եւ ոչ մին մնասուի: Ընկերութեան հասարակ գոյքն սոսնց խարդախութեան մատակարարուին, այնպէս որ օգնութիւններն բամուռն ըստ իւրաքանչիւր պիտոյից. եւ սէրանց իրաւունքներն եւ պարտիք գործաւորաց իրսւանց եւ պարտեաց հետ ներդաշնակ ըլլան:

Իսկ երբ մին կամ միւսն անիրաւեալ զան ձն համարի, ցանկալի է որ ի նմին ընկերութեան գտնուին արք ուղղամիտք եւ ձեռնհասք, որոց դատաստանին հպատակին ըստ կանոնաց: Պէտք է նաեւ հոգ տանիլ որ գործաւորին երբէք գործ չի պակսի, եւ տրամադրելի հասոյթներ ըլլան իւրաքանչիւրին օգնելու ոչ միայն գործառնութեանց յեղակարծ. եւ զիպուածական ճգնաժամերուն մէջ, այլ նաեւ խօթութեանց, ծերութեան եւ աղէտից ժամանակ. — Երբ սոցնպիսի կանոններն կամովին ստանձնեալ են, ըստ բաւականի սպաւնովեալ պիտի լինի ստորին դասակարգերու նիւթական եւ բարոյական բարօրութիւնը, այսպիսի կաթողիկեաց ընկերակեցութիւններն ոչ սակաւ աղղեցութիւն ի գործ պիտի դնեն նոյն իսկ քաղաքային ընկերութեան բարեյաջող ընթացքին վրայ: Իրաւունք ունին անցեալէն նախասեսել զսպազմս: Որովհետեւ մարդկային սոհմք եւ սերունդք իրարու կը յաջորդեն, այլ նոյա պատմութեան էջերն ոքանչեղապէս միմեանց կը նմանին, որովհետեւ դէսք եւ պատահարք կը

կառավարուին այն վերին տեսչութենէն որ ամեն մարդկային փոփոխութիւններն կ'ուղղէ այն վախճանին զոր դժած է ինքն ի ստեղծման անդ մարդկային ազգիւ — Գիտեմք թէ նորահաստատ կեկեղեցոյ առջև ժամանակաց Քրիստոնէից ի նախատինըս կը համարուէր անոնց մեծագոյն մասին ողորմութեամբ կամ աշխատութեամբ ապրելն: Այլ եւ այնպէս անանկը եւ ապիկարք, յաջողեցան գրաւել փարթամաց համակրանքն ու հըզօրաց պաշտպանութիւնը: Գեղեցիկ էր տեսնել զանոնք գործօնեայ, աշխատասէր, խաղաղասէր, արդարութեան եւ մանաւանդ սիրոյ բարձր օրինակներով պանծալի հանդիսացեալ: Կինաց եւ վարուց այնպիսի տեսարանի մը առջև յօգս ցնդեցան ամենայն նախապաշարմունք, լռեցին շարեացկամ լեզուաց բամբասանք, եւ բազմադարեան աւելորդապաշտութեան կեղծիքն տեղի տուին Քրիստոնէական ճշմարտութեան: Այսօրուան օրս կը յուզուի գործաւորական խնդիրն, որոյ բարի կամ չար լուծումն մեծապէս կը մտասանջէ զՏէրութիւն: Քրիստոնեայ գործաւորք զայն լաւ պիտի լուծեն, եթէ ընկերակցելով եւ իմաստնաբար կառավարուելով ընթանան այն շաղկէն, զոր իւրեանց իսկ եւ ընկերութեան մեծագոյն օգտովն կալան նախնիք: Զի թէ եւ անհարկն իմն սաստիկ եւ բուռն է ի մարդիկ նախապաշարմանց ու կրից զօրութիւն, սակայն եւ այնպէս եթէ կամաց շարութիւն չիջուցած չըլլայ ի նոսա համեստին զգածմունքը, անմարթ պիտի ըլլայ իրենց համար չղբալ մարդասէր իմն զգացումն զէս առ գործաւորան երբ տեսնեն զանոնք աշխատասէր, չափաւոր, եւ որ զհամեստութիւն եւ զուղղութիւն գեր ի վեր կը դասեն քան զչաճ եւ զխիզճն պարտուց քան զայլ ամենայն ինչ: Անտի ուրիշ օգուտ մըն ալ պիտի հետեւի, այսինքն է՝ զգաստութիւն, յոյս եւ զիրութիւն տալ այն գործաւորաց, որք կամ ամենեւին հաւատք չունին, եւ կամ չարաչար սովորութիւնք ունակեալ են, զոր ինքեանք եւս կը դատապարտեն: Ստէպ սոքա լաւ կիմանան զի ի պատիր յուսոյ խաբեալ են եւ յընդունայն ցնորից: Կը զգան որ ընչաքաղց տէրերնին իրենց հետ անհարկնս անողորմաբար կը վարուին եւ զիրենք իրենց ձեռագործ նիւթէն աւելի չեն նախադասեր. կը զգան որ յընկերութիւնան՝ յորս առ հարկի կը գտնուին, փոխանակ սիրոյ եւ եղբայրական գորովոյ, կը ախրեն ներքին դժտութիւնք, որք անբաժին են գոռոզ եւ անհաւատ անանկութենէ: Վաստակարեկը եւ ուժաթափը հոգևով եւ մարմնով քանիներն

կ'ուղէին անպէս վատթար ծառայութեան լուծը թօթալիկ, այլ կամ առ մարդիկէն անհամութեան կամ առ անի թշուառութեան չին համարձակիր: Արդ՝ այսպիսեայ զարմանալի կերպով պիտի օգտեն կաթողիկէ ընկերակցութիւնը, եթէ ճամբան հարթելով տարակուսեայներն հրաւիրեն իրենց ծոցը, ու զգոտացեալներն ընդունին ի բարեկամութիւն եւ ընդ իւրեանց հովանեաւ:

* * *

Ահաւաստիկ, Մեծարոյ Եղբարք, ո՞չք եւ զիմօր կը պարտին համընթանալ 'ի լուծումն զժուտրակնճիւն ինպրոյս: Թող ամեն ոք իրեն ինկածը կատարէ եւ չլանդաղի, որովհետեւ յապաղումն կրնայ աւելի զժուտրայնել արդէն իսկ կարի ծանր եզոզ չարեայ դարմանը: Կառավարութիւնը գործեն բարի օրէնքներով եւ խնաստուն հնարիմացութեամբ, դրամատեարք եւ ստարք միշտ աւաջի աչաց ունենան անձնիւր պարտիքը. գործաւորք, որք այս ինպրոյս մէջ մաս ունին, թո՛ղ օրինաւոր ճամբու մէջ հետամուտ ըլլան իրենց շահերուն, եւ քանզի, որպէս 'ի վեր անդր ասացաք, ճշմարիտ եւ հիմնական դարմանն միայն 'ի կրօնից կը մատակարարի, ամենեքին համողութիւն թէ պէտք է միւսանգամ դարձ առնել 'ի Քրիստոնէական կենցաղ, առանց որոյ նոյն ինքն ամենէն ազդու կարծուած հնարք ոչինչ պիտի ստարեն եւ լինին անպետ 'ի փրկութիւն: Իսկ Եկեղեցին ո՞չ երբէք եւ ոչ իւրք պիտի պակսեցնէ իւր գործակցութիւնը. որ այնչափ աւելի ազդողագոյն պիտի ըլլայ, որչափ ազատագոյն. եւ զայս լաւ 'ի միտ առնուլ կը պարտին նոքա, որոց պարտք պաշտամանն են ինամեւ ժողովրդոց բարիքն: Արբաղան պաշտօնեայք ուլոց եւ եռանդեան ամենայն զօրութիւնքն առ այս ուղղեն, եւ առաջնորդալք 'ի ճոխութենէք եւ յօրինակաց ձերոց, Մեծարոյ Եղբարք, չի դադարին 'ի կրկնելոց ամենայն ժողովրդային կարգաց Աւետարանին պատուիրանները: Ամեն հնարք հնարեն 'ի փրկութիւն ժողովրդոց, եւ նախ քան զամենայն սնուցանեն յանձինս եւ վառեն բորբոքեն յայլս, ի մեծամեծաց մինչեւ ցիտքունս. զսէր՝ զտիրութիւն եւ զթագուհի ամենայն առաքիլութեանց: Զի բաղձացեալն փրկութիւն պարտի գլխաւորաբար սիրոց մեծ զեզման մը պտուղն ըլլալ, այս ինքն է Քրիստոնէականն այն սիրոց որ կ'ամփոփէ յինքեան ամբողջ Աւետարանը, եւ որ միշտ

պատրաստական ըլլալով ընկերին համար զանձն զոհելու, դարուն ամբարտաւանութեան եւ անձնապաշտութեան ամենէն ապահով դեղժամին է: Որոյ առաքինութեան Ատուածային ուրուագիծը այս բաներով զրոյմեց Պօղոս Առաքեալ. «Մեր երկայնամիտ է, քաղցրանայ, ոչ խնդրէ գիր. ամենայնի տեսէ. ամենայնի համբերէ» (1):

Առհաւատչեայ Ատուածեղէն պարզեաց եւ զրաւական Մեր սիրոյն, ձեզմէ իւրաքանչիւրին, Մեծալայ Եղբարք, ձեր Կղերին եւ ձեր Ժողովրդեան, մեծաւ սիրով 'ի Տէր կը շնորհեմք Մեր առաքելական Օհնութիւնը:

Տօնալ է Հրո՛ւ աւ Ս. Պետրոսէ, յառաջ թէ Մայիսի յամի
1891 Քահանայապետութեան Մերոյ Ժ.Գ.ի:

ԼԵՒՈՆ ՊԱՊ ԺԳ.


Թարգմ.

Գեորգ Կ. Թերզեպաշեան



(*) Ա. Կոր. Ժ.Գ. 4—7:

ՆՈՐԱԵԿԵԱՆ
ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ
Ի ՇԻՍԻՍԱՅԻՆ ԲԵԻԵՌ



Եւրոպոյ լրագիրք իմաց տուին վերջին ասուներս որ Նոր-վեկիոյ կառավարութիւնը՝ Աղզային ժողովքէն ինդրած էր 280,000 ֆր.ի նպաստ մը շնորհել Պր. Ֆր. Նանտէնի ի Հիւսիսային բեւեռ ընելիք ուղեւորութեան համար: Կրօնխնամտոյ ներսի կողմերուն այս քաջ եւ բազդաւոր խուզարկուն կը մըտադրէ արդ ուղեւորիլ ի Հիւսիսային բեւեռ:

Նորվեկիացի խուզարկուին այս նոր փորձին կարգէ դուրս գրվիւ մը ընծայող բանը ամենէն աւելի իւր ճամբորդութեան յատակագծին տարօրինակութիւնն է: Բեւեռային ուղեւորք, գուցէ ի բաց առեալ մին, ամենքն ալ մէկ զազալար միայն ունեցած են մինչեւ հիմա, որ է հիւսիսային կողմանց ընու-թեան պաշտպանիչ զօրութեանց դէմ երթալ կողուլ: Իբր թէ յարձակմամբ սառնային անհուն բերդին մէջ մտնել ուզած են. եւ սակայն յարձակողները ցարդ ամեն կողմէն ետ մղուեցան: Պ. Նանտէն խորհեցաւ հեռեւաբար թէ նոյն այս ընական ոյժե-րուն մէջ ոչ թէ հակառակորդներ՝ այլ ընդհակառակն պէտք էր օգնականներ փնտռել, անոնց զաշնակցութեամբը ներս մտնելու կարող ըլլալու համար. եւ նա այս զաշնակիցները գտած ըլլալ կը կարծէ:

Յաւելունք որ նոյն իսկ այն պարադային մէջ, ուր Պարոն Նանտէնի յոյսը ի վերեւ չեղնէ, անվտանգ է՛ է այս նոր տեսակ զաշնակցաց ընդ առաջ երթալ, ինքզինքը անոնց վստահիլ եւ երբ ուզուի անոնցմէ փախչիլը, որովհետեւ անոնց անձնատուր ըլլալէն ետքը՝ մարդ ընդ միշտ անոնց ձեռքը գերի մնալու վրասանգի մէջ է: Եւ այս վտանգիս մէջ ինքզինքը նետել որոշեց Պ. Նանտէն, զոր եւ նա քիչ հաւանական կը կարծէ:

Ըսի քիչ մը առաջ որ յառաջագոյն եղած Բեւեռային ուղեւորութեանց մէջ միայն մէկը հիմնուած էր զրեթէ նման յատակագծի մը վրայ. այսինքն, նետուիլ այն մեծ ջրի հոսանաց մէկուն մէջ, որ կ'ուղղուին դէպ ի Հիւսիս, եւ նորա միջոցաւ

քշուիլ տարուիլ, եւ ետ դառնալու ուրիշ միջոց չունենալ բայց եթէ Բեւեռային ներքին ծովը ծայրէ ի ծայր անցնիլ:

Ժանէթ անուշնաւուն ուղւոյն յատակագծին առաջին թիւադրիչը ըլլալէն ետքը Պր. Ճեյմս Կորաքն Պեհնէլզ, զայն ընդհանուր կերպով մը ցոյց տուած էր: Նա ըսած էր. «Մեր գաղափարը մեր նախորդաց հակառակ ճամբաց մը բռնել է. մենք պիտի համոխնք Խաղաղական Ուլիխանտէն Պեհրինկայ նեղուցը, եւ հոն քանի որ հոսանք մը կայ, զայն մեզի դէմ ունենալու սեղ, մեզի հետ պիտի ունենանք եւ պիտի ջանանք այն հոսանքին հետ աւոր միւս ծայրէն Ատլանտեան Ուլիխանտայն մէջ ելլելու:

Ամենուն ծանօթ է սակայն որ Լոնկ տեղակալէն հրամանատարեալ արշաւանաց ՚ի գերեւ ելլելը: Սեպտեմբեր 6 ին 1879 ին Պեհրինկայ նեղուցին հիւսիսային արեւմտեան կողմը Մերոյա կղզւոյն մօտերը սառոյցներէն բռնուելով Ժանէթ անուշնաւը յամրաբար մղուեցաւ անընդհատ մինչեւ Նոր Սիպերիոյ կղզիները ուր ընկրմեցաւ 1881 Յունիս 13 ին. նաւաստիք ուրիշ հնարք չի գտնելով ջանացին Սիպերիոյ ցամաքը համել ուր կըրցան իրենք զիրենք նետել վերջապէս հաղարումէկ վտանգներէ ճողպրելով:

1884 ի Յունիսի 18 ին, որ Լոնկ նաւապետին հրամանատարած նաւուն ջախջախումէն ճիշդ երեք տարի ետքը Կրօէլանտիոյ Նուլիանհասալ կոչուած տեղւոյն մօտ ծփացող սառոյցի մը վրայ քանի մը առարկայներ գոնուեցան, որոնց նաւարկութեան սեղը՝ Ժանէթի նաւաստիներէն թողուած ըլլային ճանչցուեցան, ուղղակի հիւսիսային բնեւոյն հակառակ կողմը: Ինչ ճամբաց բռնած էր արդեօք այս սառոյցի կտորը իւր հետաքրքրական բնութիւնը, ո՞րն է այն ծովային ճանրան որ այս սառոյցը կրելով Նոր Սիպերիոյ արշիպելագոսէն Կրօէլանտիոյ գաղթականութիւնը հատած է:—Այս խնդիր մ'է զոր Պր. Մոհն Բրիտիանիայ օրերեւութաբանական գիտութեանց զիւանին զիտուն վարիչը, որ այս տեսակ նիւթոյ մէջ ամենէն կարող անձանց մին է, յարոյց 1884 Նոյեմբ. 28 ի նստին մէջ Քրիստիանիոյ Գիտութեանց ընկերութեան Ըստ իւր հաւանական կարծեաց գոնուած առարկայք չի կրցան նախ ուղղուիլ դէպ Արեւելք Սմիթի նեղուցէն վար իջնելու համար, որովհետեւ Նուլիանհասալ զաչող մի միայն հոսանքն այն է որ Կրօէլանտիոյ արեւելեան եզրերքը շրջելէն վերջը Ֆերուէլ գլխէն կը դառնայ եւ կ'ուղղուի դէպ ՚ի հիւսիս:

Գարձեալ շատ քիչ հաւանական է որ անոնք զէս պրեւ-
մուտք գացած ըլլան նախ՝ հիւսիսային Սրպերիոյ եղերքներէն
և և յետոյ նոր Զեմպլիոյ, Փրանց Եօզէֆ, և Սրիձպերիի մէջտե-
ղէն անցնելով. այնչափ ծանօթ են այն հոսանքները որ իրարու
հակառակ կեցլեն այս ճամբուն վրայ զէս պրեւմուտք առանց
ընդհանուր ուղղութեան մը հետեւելու, որ կրնայ ըսուիլ թէ հոն
սառոյց մը չէր կրնար երեք տարիէ աւելի ժամանակ զնկ այս
ճամբան ընելու համար, բայց աստի սառոյցը պիտի խորտակուեր
և հալեր նուազ տար հոսանայ մերձաւորութենէն: Հետեւաբար
ուրիշ բան չէր կրնար ենթադրուիլ բայց եթէ բեւեռային ներքին
կողմանց սահմանաւորեալ ճամբու մը գոյութիւնը, որ այս սա-
ռոյցը իւր առարկայներովը բերած ըլլայ:

Ժաճէլի ճանապարհորդութեան թեւադրիչէն արտայայտեալ
ընդհանուր գաղտնաբերէն և Նուլիանհասպի մօտ գտնուած
առարկայիցմէ Պ. Մօնի հանած գիտնական հետեւութիւններէն
եղած է Պ. Նանսէնի ճանրորդութեան յտաակազիծը: Եթէ Ժա-
ճէլի նաւատորմը բաւականաչափ պաշար ունենային, և եթէ
իրենց սառոյցի կտորին վրայ կեցած ըլլային, ըստ Պ. Նանսէնի
Ժաճէլի ուղեւորութեան վախճանը անտարակոյս բոլորովին ու-
րիշ պիտի ըլլար: Որովհետեւ շարունակ հոսանքէն տարուելով
անոնք անցած պիտի ըլլային ներքին բեւեռային կողմը յամրա-
բար արդարեւ բայց յարաբերական ազանօլութեամբ մը, վերջա-
պէս Սրիպերիի և Կրօնշտանտիոյ մէջտեղէն Ստլանտեան Ով-
կիանու մէջ կլլելու համար: Եւ այս է ահա զոր Պր. Նանսէն
կ'առաջադրէ ընել:

Նուլիանհասպի քով Ժաճէլէն առաջ եկած բեկորներուն
զիւտը Պեհրինիայ նեղուցէն կանոնաւորապէս և ուղղակի Հիւ-
սիսային բեւեռէն անցնելով Կրօնշտանտիայի եղերքը համուղ
ծովային հոսանքի մը զոյութեան ենթադրութեանը ամենէն զօ-
րաւոր նեցուկը ըլլալ կը թուի անտարակոյս. սակայն միայն ա-
սի չէ:

Պր. Մօնի՝ Քրիսթիանիայի գիտութեանց ընկերութեան ը-
րած հաղորդութենէ երկու տարի ետքը նոր քննութիւն մը
այս հետեւութիւնները զէթ մինչև մէկ աստիճան կը հաստա-
տէր:

Ժամանակէ մը ի վեր արդէն Քրիստիանիոյ ազգազրահան
մուսարմը, Կրօնշտանտիոյ արեւմտեան եղերաց վրայ Կօթհա-
պի մտ ծիպացող վայտնրուն մէջէն գտնուած առարկայ մը ու-

նիւ Ասի այն գործիքներէն մին է, զոր կը գործածեն Եւրփմացիք՝ թռչնոց որսի երթալուն՝ նետ նետելու համար. բայց նոյն իսկ Կրօնընտանոց մէջ գործածուած այս տեսակ գործիքներէն բոլորովին սարքեր զէնք մը ունի սակիայ: Հետեւաբար իւր ծագումը գաղտնիք մը մնաց մինչև 1886, սոյն թուականին Նորվեկիացի ճամբորդ մը, Պր. Ճազոպսոն, զայն ճանչցաւ թէ ձեւոյն եւ թէ զարդերուն մանրամասնութեանցը մասին բացարձակապէս նման այն գործեաց՝ զորս կը գործածեն Եւրփմացիք որք կը բնակին Ալասքայի թերակղզւոյն եզերաց քանի մը մասանց վրայ — Բորթ-Քլարանսի, Նորթոն-Սոանսի չրջակայցի եւ Եւոքոն գետին բերնին մօտ: Այս ստարկան եւս միթէ Ժանէլի սառոյցի ճամբուն հետեւած չէ՞ Կրօնընտանի համեմու համար: — Հաւանականութիւնը բաւական մեծ կը թուի:

Ուրիշ պատճառներ ալ կան ենթադրելու համար որ Սիւպերիոյ հիւսիսային եզերքներէն ելլող եւ Կրօնընտանոց եզերքները համեմու համար ներքին Սառուցեալ Ովկիանոսէն եկող հոսանաց մէջ ուղղակի կապ մը կայ: Վերջին հոսանքը մեզի քաջ ծանօթ է հոն, ուր նա կ'իջնէ դէպ Ստլանտեան Ովկիանոսը քիչ ալի պաղ ջրոց կոյտերով, քշելով շատ մը սառոյցի լեռներ եւ բերնելով Կրօնընտանոց եւ Իոլանտիոց բնակչաց իրենց ալեմուտի փայտի պաշարը որ մի միայն ծանօթ է այս անանտառ երկիրներուն մէջ: Այս փայտերուն մէջ կանոնաւորապէս միշտ կը գտնուին հիւսիսային Սիպերիոյ վերաբերեալ փայտի տեսակներ, ճիշդ նոյն տեսակները որք տեսնուեցան Սքիպերկի հիւսիսային կողմը քշուելով բեւեռային հոսանքէն եւ որոնց Նոր-Սիպերիոյ արշիպելագոսին հիւսիսային կողմը ծովուն վրայ ծփելը կը տեսնէին Ժանէլի մարդիկը: Այս հոսանքին մեծութիւնը կը ցուցնէ որ նա պարտի մեծ տարածութիւն մը ունեցող աւազանէ մը մնանիլ. մանաւանդ երբ կը յիշենք որ Արջային աւազանէ Եւրոպայի, Ասիոյ եւ Ամերիկայի հիւսիսային կողմը, գրեթէ ամեն տեղ ուր նա ծանօթ է, յարաբերաբար քիչ խորութիւն ունի: Դարձեալ Սիպերիոյ գետերն են որ ըստ ամենայն հաւանականութեան պատճառ են բեւեռային հոսանքին եւ ասոր նուազ ալիութիւնը կը թուի հաստատել այս ենթադրութիւնը, մանաւանդ որ հոսանքին աւելի խորունկ տեղումները ալիութիւնը կ'աւելնայ: Այսպէս դժուարին պիտի ըլլար բացատրել այս նուազ ալիութիւնը սառոյցներուն կազմութեամբը եւ հալմամբը միայն:

վերջին փաստ մ'ալ կանուկնք օգերեւութաբանական գիտութեանց վրայ խորհրդածելով: Գիտենք որ ցած ճնշողութեան սահման մը, մթնոլորտային ճնշողութեան ամենափոքր կէտ մը Ատլանտեան Ովկիանոսէն՝ Արիցպերկի և Ֆրանց-Եօզէֆ երկրին հարաւային եզերաց վրայ գէպ 'ի Միսիւրական սառնային ծովը կը տարածուի: Արդ՝ լաւ հաստատեալ օգերեւութաբանական օրինաց նայելով այս սահմանին հարաւակողման տիրող հովիւրը պարտին արեւմուտքէն արեւելք ուղղութիւն մը ունենալ, և Միսիւրիոյ հիւսիսային եզերաց վրայ գէպ արեւելք ուղղուող հոտանք մը յառաջ բերել, հոտանք մը որուն գոյութիւնը արդէն հաստատուեցաւ: Մինչդեռ ճնշման ամենափոքր աստիճանին հիւսիսակողմը հողմաց տիրող ուղղութիւնը պարտի ըլլալ արեւելքէն արեւմուտք, հետեւապար մի և նոյն ուղղութեան պիտի հետեւի այս կէտին վրայ, սիսիւրական գետերը ընդունող և արեւելեան Կրօէպանտոյ եզերացը վրայ հոսող հոտանք մը:

Խնդրոյն գիտնական կողման վերաբերեալ այս համառօտ խորհրդածութիւնը լմնոյնելէն առաջ պէտք է պնդել այն կէտին վրայ, այսինքն այն ենթադրութեան որուն վրայ հաստատուած է Պ. Նանսէնի ուղեւորութեան յատակագիծը: Ըստ այս ենթադրութեան, հոտանք մը կայ որ կ'անցնի ուղղակի Արջային Ովկիանոս ներսի կողմերէն, առի ըստ սլարապայի, նախայղացեալ դադափարի մը աւելի ոյժ տալու մտօք գտնուած ենթադրութիւն մը է՛: Այս գաղափարս ընդհանուր և անորոշ կերպիւ յայտնուելէն ետքը ուսումնասիրուեցաւ զանազան տեսակէտներու տակ մինչև և այն վայրկեանը ուր Պր. Նանսէն ներկայացաւ միաբանելու համար, այս տարերքը անոնցմէ որոշ արդիւնք մը հանելու համար, երկրիս արջային կողման անցքը ընելու և անոր փորձը անձամբ ընելու համար, անցք մը որ միշտ սարսափելի կերպով փտանդաւոր է :

Քանի մը խօսք ըսենք հիմա Նորվեկիացի խուզարկուին յատակագիծին իրականալուն վրայ: Նախ, հարիւր եօթմանասուն տակառաջափի ընդունակութեամբ փայտեայ նաւ մը շինել պիտի տայ, շատ զօրաւոր և բաւական ծուռ կողերով որպէսզի կիժէ նաւը սառույցներէ բռնուելու ըլլայ վեր վերցուի սառնաց խորտակուելու վախի: Այս նաւը պիտի ունենայ լէք օժանդակ երկրորդ շողեշարժ մեքենայ մը և 10-12 անձանց համար հնգամեայ պաշար և ածուխ պիտի սլարունակէ: 1892 տարւոյն Փետրուար ամսոյն ճամբայ պիտի ելնէ, նոյն տարւոյն Յունիս ամսոյն գրտ-

հուելու համար Պեհրինկայ նեղուցը եւ անտի շարունակելու իւր ճանքան զէպ 'ի Նոր-Սիպերիոյ Երչիպիդագոսը, եւ հոն պիտի ուղտո՞ նպատուուոր օղը ազատ ծովու մէջ ըստ կարի զէպ 'ի հիւսիս երթալու համար, որ պիտի ըլլայ հաւանօրէն Օգոստոսի մէջ կամ Սեպտեմբերի սկիզբը, եւ համնելու այսպէս այն կէտը ուր ձմեռուան մօտենալուն սառը կազմուելով եւ միանալով պիտի բռնէ նաւը, պիտի վերցնէ զայն իւր կոնակը եւ պիտի տանի բեւեռային ներքին կողմերը: Եթէ այս յուսոյն հակառակ նաւը խորտակուելու ըլլայ, ուղեւորք իրենց նաւակներովը եւ պաշարներովը սառոյցին վրայ պիտի հաստատուին: Ետ գտնալու ինչիր չի պիտի ըլլայ: Ըստ Պ. Նանսէնի ուղեւորութիւնը երկու տարի պիտի տեւէ, բայց ինչպէս քիչ մը առաջ տեսանք անի, իմաստնարար կրկինէն աւելի ժամանակի համար պաշար պիտի աւնու:

Սակայն Պ. Նանսէնը վախցնող բանը՝ բեւեռային կողմերը այսքան երկար ատեն կենալը չ'է: Նորվեկիոյ կառավարութեան ներկայացուցած յայտարութեան մէջ նա երկարօրէն կը վիճէ զգետնեղինաց, ընդհարութեան վտանգաց, ձմեռուան ցրտին վրայ եւն. եւն. եւ այս ամեն կէտերուս վրայ գոհացուցիչ հետեւութիւններ կը հանէ. ինչ կերպով որ, կըսէ, գործառնութիւնը նկատուի եւ ինչ գժուարութիւններ որ կնխադրուին սնունք, այնչափ մեծ չեն որ կարենայ մտածուիլ թէ պատշաճ կազմութեամբ մը, ուղեւորութեան անգամոց մտացի ընտրութեամբ մը եւ լաւ կարգապրեալ վարչութեամբ մը կարող պիտի ըլլուի զանոնք յաղթելու եւ երջանիկ արդիւնք մը ապահովելու: Զինքն ամենէն աւելի մտատանջ ընող բանը սա է որ ճամբորդ սառոյցը արջային Ուլիսանտոր պիտի սնցնի եւ անկէ պիտի ելլէ գուցէ առանց զպչելու ճիշդ բուն իսկ բեւեռին: Եթէ նաւը մէկ ատտիւճանը աւելի հեռաւորութենէ անցնի բեւեռէն, կըսէ Պր. Նանսէն, վերջին աստիճան վտանգալի պիտի ըլլար զայն թողուլ հոսանքին մէջտեղը եւ երթալ ուրիշ հոսանաց միջոցաւ տարուած սառոյցներու վրայ բեւեռ վնասելու, ի զարձին նաւը չի գտնելու վտանգաւ: Բայց ասոր պիտի կրնար պտտասխանուիլ թէ եթէ հիւսիսային բեւեռին վրայ ցամաք երկիր մը չի կայ, հաւանական է որ երկրագնդիս թաւարման շարժումը պարտի զէպ արեւմուտք հոսող ծովային հոսանք մը յառաջ բերել որ բեւեռէն անցնի. եւ եթէ ցամաք երկիր մը կայ որ մղէ հոսանքը զէպ 'ի նուազ բարձր լայնութեան աստիճանները, հաւանա-

կան է որ նաւը դէպ այս ցամաքը պիտի մղուի, եւ այն ատեն նաւը պիտի խարսխեն երթալու բեւեռը այցելելու համար: Սակայն Պր. Նանսէն արդարացի է երբ կ'ըսէ թէ այս խնդիրը հոս երկրորդ կարգի կարեւորութիւն մը ունի: Մեր ձեռնարկելիք ուղեւորութիւնը, կ'ըսէ, երկրագնդիս առանցքին հիւսիսակողման ծայրին մաթեմատիկական կէտին վրայ ոտքերնիս դնելու համար է, այլ բեւեռը չըջայատող անհուն երկիրը քննելու համար է որ ցարդ անձանօթ է. եւ այս յարաբերութեամբ վերջնական արդասիքը նոյն իրական եւ վերջնական արժէքը պիտի ունենայ որ եթէ հոսանքը զմեզ տանէր մինչեւ բեւեռը իսկ կամ թէ թոյլ տար մեզ անոր մօտէն անցնելու միայն:

Առանց Պր. Նանսէնի յատկազօծին հիմը կազմող պիտնական ենթադրութեան վրայ վիճելու կը համարձակիմ ըսելու որ անոր իրականացումը ամենայնպէս եղանակաւ ըլլալու կերպով կը ներկայանայ:

Արշաւանաց նիւթական լաւ կարգադրութիւնը, աղեկ կարգաւորեալ նաւաստեաց փոքր խումբը որոյ անդամք ընտրուած են այնպիսի անձանց միջէն որ վարժ են ամին յօգնութեանց եւ աշխատանաց մանաւանդ այն դժուարութեանց որոց պիտի պատահին բեւեռային կողմերը, փորձառու գլուխ մը, որուն ըրած յաջող արշաւանքները Կրօէնլանտիոյ սառուցեալ անապատներուն մէջ առհաւատչեաց մ'են ներկային յաջողութեան, եւ վերջապէս «միշտ յառաջ» նշանաբանը, միշտ յառաջ դէպ ՚ի յաղթութիւն կամ դէպ ՚ի մահ, առանց բնաւ զաղափար ունենալու ետ դառնալու. ահաւասիկ տարերք որ յաջողութիւն կը խոստանան:

Ուրեմն այս արշաւանաց մէջ երիտասարդ եւ անուանի ճանապարհորդը պիտի երթայ փնտռելու բեւեռային կողմանց բնութեան զաղանի զօրութեանց գաշնակցութիւնը. յուսանք որ զայն պիտի գտնէ եւ իրեն պիտի հնազանդեցնէ. համոզուած ենք սակայն որ կայ ուրիշ գաշնակցութիւն մը որին ասպնովեալ է հիմակւրճէ, եւ ասի հատարակաց կարծեացն է որուն իղձերը եւ սէրը իրեն պիտի հետեւին, այն հասարակաց կարծեաց որ զիւրազանական քաջասրտութենէն ազդեալ գործառնութիւնները զընահատել պիտէ:

Արդարացի է սակայն Ֆրանսացի Պր. Լամպերի յիշատակութիւնը ընել հոս, որն որ 1870 էն առաջ յղացած էր սոյն այս ուղեւորութեան յատկազօծը որովհետեւ գուշակած էր այն հոսանքին գոյութիւնը որնոր անկէ վերջ իւր իրական գոյութեան

նիւթական ասպնոցները տուաւ Պր. Լամպեր ամենայն ճգամբ աշխատած էր իրականացնելու այն յատակադիւծը ամեն ընդլիմութեանց հակառակ, չարակամութիւնը միայն ստիպած էր ղինքը յետաձգելու զայն. երբ 1870ին ինկաւ սրտերազմի դաշտին վրայ: Հանդերձ այսու Պր. Նանսէնի ձեռնարկութեան արժանիքը չի պղտիկնար բնաւ, սաչափ միայն կայ որ ձայն մը բարձրացած չ'է յիշեցնելու համար զՊր. Լամպեր Աշխարհապահական ընկերութեան:

Անդոն Թօփճեան



ՄԱՐՄՆԱՄԱՐՁ

Ի ՊԷՏՍ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Շարայարութիւն (*)

ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՒ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

Մերձեցում սրնբաց

1. Սրունքներդ իրարմէ սակաւ ինչ հեռացուր եւ ոտքերուդ ծայրերուն վրայ կեցիր, յետոյ իրարու մտակցուր սահեցնելով, զեանէն չկարելով սաքիդ ծայրերը եւ ծունկերդ ձգտելով: 2. միեւնոյն կերպով հեռացուր: Կրկնէ 6, 9, 12 անգամ:

ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

Ձգտումն սրնբաց

1. Աջ ծունկդ կտրելի եղածին չափ վեր վերցուր. 2. սը-

(*) Տես Պարկեր Բ. Տարբ, էջ 168

րունքդ յառաջկոյս ձգտէ. 3, ծունկդ մարմնոյդ մօտեցուր . 4 .
առաջին դիրքը բռնէ դարձեալ :

Միեւնոյն շարժումը ձախ սրնքով ալ կրկնէ :
Փոփոխակի կրկնէ 6, 8, 10 անգամ :

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՒ ԵՐՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

Զգտումն եւ քիւրումն ծնգաց

1. Կարելի եղածին չափ յետկոյս երկնցուր աջ սրունքդ . 2 .
ծունկդ ծռէ . 3. ծունկդ բաց . 4. առաջին դիրքը բռնէ :

Միեւնոյն շարժումը ձախ սրնքով ալ կրկնէ :
Փոփոխակի կրկնէ 6, 8, 10 անգամ :

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

Ելեւեջ ծնգաց

1. Ձեռքերդ ազդրներուդ վրայ դիր . աջ սրունքդ ծռէ եւ
կարելի եղածին չափ վեր վերցուր . 2. Իջեցուր :

Միեւնոյն շարժումը կրկնէ ձախ սրնքով եւս :
Կրկնէ 6, 8, 10 անգամ փոփոխակի իւրաքանչիւր սրնքով :

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

Զգտումն սրնքաց յետկոյս

1. Աջ սրունքդ յետկոյս նետէ, սակաւ ինչ ձախ ծունկդ
եւ մարմնոյդ վերի մասը յառաջ կոյս ծռելով . 2. առաջին դիր-
քը բռնէ դարձեալ :

Միեւնոյն շարժումը ձախ սրնքով ալ կրկնէ :
Կրկնէ փոփոխակի 8, 10, 12 անգամ :

ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

Նստումն ի գումն

Ձեռքերդ ազգրներուդ վրայ դիր ևւ գարշապարներդ իրարու մօտեցուր. ոտքերուդ ծայրին վրայ կանգնէ՝ մարմինդ ուղիղ բռնելով. 2. կրցածիդ չափ խոնարհէ՝ գարշապարներդ իրարմէ չհեռացունելով. 3. առաջին դիրքը բռնէ գարձեալ. Կրկնէ 10, 15, 20 անգամ:

ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՒ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

Ձգտումն բազկաց

1. Կոռւփներդ փակ՝ բազուկներդ յառաջ ևւ յետկոյս նետէ, մարմնոյդ վերի մասն ազատ թող որպէս զի չարժի: Կրկնէ 10, 15, 20 անգամ:

ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

Ձգտումն բազկաց

1. Բազուկներդ նետէ յաջ. 2. յետոյ յահեակ, մարմնոյդ վերի մասն ազատ թողու չմոռնաս, որպէս զի սակաւ ինչ յառաջ ծոփ: Կրկնէ 50, 75, 100 անգամ:

ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

Ձգտումն բազկաց

1. Կոռւփներդ փակ՝ աջ ձեռքդ ձախ ուսիդ տար, միանգամայն ձախ բազուկդ հորիզոնական դիրքով երկընցուր յետկոյս. 2. նետէ բազուկներդ ձախէ յաջ ևւ փոխադարձաբար,

այնպէս զի կիսաչրջանակ մի յօրինուի: Իրանդ պիտի հետեւի այս շարժումէն յառաջ եկող շրջանին, բայց մարմինն ուղիղ՝ եւ սրունքներդ անշարժ պիտի մնան:

Կրկնէ 10, 15, 20 անգամ:

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

Զգտումն բազկաց

1. Աջ սրունքդ յառաջ զիբ՝ կռուվներդ կուրծքերուդ առջին բերելով. 2. ուժով յառաջ նետէ բազուկներդ. 3. յետս նետէ:

Կրկնէ 6, 8, 10 անգամ:

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԵՒ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

Զգտումն մարմնոյ

1. Աջ սրունքդ յառաջ բեր. 2. խոնարհէ մարմինդ աջ սրունքիդ վրայ եւ երկու ձեռքերդ գետինը դպչին. 3. վեր կանգնէ՝ բազուկներովդ մեծ շրջանակ մի յօրինելով եւ երկու կողմէն վար թող՝ կիսաչրջանակ մի գծելով:

Միեւնոյն շարժումը ձախ սրունքով ալ կատարէ:

Կրկնէ 6, 8, 10 անգամ:

Այսչափս բաւական կը համարինք. թէպէտեւ բազում ուսուցիչք աւելի շատ շարժումներ հնարած են, սակայն կը հաստատենք թէ վերոյիշեալ շարժումներով կարելի է մարմինը զարգացունել եւ ամէն մկանքն ի շարժում ածել: Եթէ ոք մեր նշանակած բանական եղանակին աստիճանաբար հետեւի ճշդպէս՝ առանց վտանգի կ'աճեցունէ մարմնական ոյժն եւ կատարեալ առողջ վիճակի մէջ կը լինի:

Սակայն չկարծուի թէ մարմնամարզը, որ ոյժը կ'անեցունէ, կարող լինի զեղծումներէ յառաջ եկած սպառումը դարմանել, ժուժկալութիւնն եւ յամենայնի չափաւորութիւնը՝ մարմնամարզի նպաստամատոյց լինելու են:

Վերոյիշեալ կրթանց քաջ սովորելէն յետոյ անօգուտ չէ գնոյնս կատարել երկաթէ թեթեւ զոյգ գնդակներով:

ԳԼՈՒԽ Գ.

Այս երկասիրութեամբ զլսաւորապէս մտադիր եղանք իւրենց պարտուց եւ զբաղմանց պատճառաւ անշարժ կեանքի դատապարտեալ անձինքը սովորեցնել մարմնամարզական կրթանաց՝ առանց ժամանակ կորուստելու եւ առանց ծախսի:

Այն զանազան վրօսանքն՝ զոր աստանօր պիտի նշանակենք՝ կարելի է ամենուրեք կատարել իրերով, զոր գտնել զիւրին է:

*
**

ՔԱՅԼԱՄԱՐԶ

Այս կրթանքը շատ օգտակար է առողջութեան համար. մարմնոյ ամեն մկանքը կը շարժէ միանգամայն. կը դիւրացնէ թոքերու պաշտօնը եւ մաքուր օդոյ նորոգումը՝ որ կը զօրացունէ զարիւն:

Քայլելու ժամանակ ուղիղ բռնէ մարմինդ. կախ թող բազուկներդ, եւ քայլ ան չափաւոր արագութեամբ 75 հարիւրդամնոյրի երկայնութեամբ: Այս շարժմամբ բազուկները կ'որորին եւ այս որորումը ազդեցութիւն կ'ունենայ կուրծքի մկանց եւ թոքերու պաշտօնին վրայ:

*
**

ՈՍՏԱՄԱՐԶ

Այս կրթանքն երկու եղանակաւ կը լինի. ի վերուստ եւ յառաջ: Երբ խնդրես ոստնուլ խոչնդոտի մը վրայէն, պէտք չէ զի այդ՝ կարողութենէդ հետու լինի, ապա թէ ոչ գուցէ ոտքերդ խոչնդոտին դպչին եւ ինկնաս յոյժ վտանգաւոր կերպով:

Երբ խնդրես յառաջ ոստնուլ, մի՛ փութար, մարմնոյդ մօտեցուր՝ կռուիներդ ուժով սեղմելով, երբ ոտքերդ դետին դպչին, կտորէ կարթերդ, զի այդ կերպով անկամանդ սաստկութիւնը կը մեղմանայ:

*
**

ՁՈՂԱՄԱՐԶ

Ա՛ռ ամուր վայտէ շինուած ողորկ եւ կլորցած ձող մի, սկսէ՛ նախ եւ առաջ կարծով, յետոյ երբ վարժիս այդ կրթանքի, կրնաս աւելի երկայն ձող գործածել:

Ոստելոյ համար աջ ձեռքով բռնէ՛ ձողը դրեթէ ծայրէն, եւ ձախ ձեռնովդ ալ կարելի եղածին չափ վարի կողմէն բռնէ, եւ կարթերուդ ուժ տալով բարձրացիր: Այս դիրքին մէջ դարձիր յայն կողմ ուստի նետուեցար. ձողը թող եւ ինկիր ոտքերուդ ծայրին վրայ, կարթերդ կտորելով:

Կարելի է ձողով երկայն տեղ երթալ, բայց, յայնժամ, ձողը պէտք չէ թողուլ, նովաւ կիսաշրջանակ մի յօրինէ եւ այսպէս շարունակէ:

Յառաջ ոստնուլ սկսելու համար, լաւ է միւս տեսակներուն քաջ վարժիլ, վասնզի այս կերպ ոստումը կատարելու համար բազուկներն ու ձեռները յոյժ զօրաւոր լինելու են:

Դիւր ձողն այն տեղ ուր կը խնդրես իջնել ոստելով, յետոյ մարմննդ ծալլէ՛ դետնէն բարձրանալուդ ժամանակ, սակաւ ինչ դարձիր ձողին շուրջը, այնպէս զի, երբ ինկնաս, դէմառ դէմ դաս այն կէտին ուստի ելար: Գետնին դպած պահուդ կտորէ կարթերդ կարելի եղածին չափ:

*
**

ՍԱՆԴՂԱՄԱՐԶ

Սանդղամարզի կրթանք բաղմատեսակ են, աստ պիտի նշա-

նակենք զայնս միայն զոր կարելի է կատարել ամենուրեք եւ ամէն սանդղով, միայն թէ սանդղուն ամուր լինի եւ պատին յենու անշարժ:

Առաջին Կրթանք

Ե՛լ սանդղին վրայ սովորական եղանակաւ:

Երկրորդ Կրթանք

Ե՛լ սանդղին վրայ եւ իջիւր անտի առանց ձեռներդ բռնելու զրայ դնելու:

Մօտեցուր արմուկներդ մարմնոյդ՝ կուսիներդ փակ բռնելով: Ետ ետ զալով վար իջնել սիսելէ առաջ, նախ քաջ սովորէ վեր ելնել առանց ձեռներդ բռնելուն վրայ դնելու, եւ իջիւր յետոյ սովորական կերպով: Եթէ քաջ սովորիս այս կրթանց, այն ժամանակ ջանս՝ ետ ետ զալով վար իջնել՝ առանց ձեռներդ բռնելուն վրայ դնելու: Յետոյ կրնաս թիկունքդ դարձունել սանդղին եւ այնպէս իջնել առանց ձեռներդ բռնելուն վրայ դնելու:

Գլխոյ պտոյտի ենթակայ եղողները այս կրթանքը չընեն:

Երրորդ Կրթանք

Վեր ել սանդղին հակառակ կողմէն, ոտքերուդ օդնութեամբ կամ ոչ: Եթէ առաջին եղանակաւ ելնել ուղեւ, փոփոխակի մի աստիճանէն միւսն անցուր աջ ոտքդ եւ ձախ ձեռնդ, յետոյ ձախ ոտքդ եւ աջ ձեռնդ միանդամայն:

Վար իջնելու համար ըրէ միւսնոյն շարժումներն հակադարձ կերպով:

Եթէ երկրորդ եղանակաւ ելնել խնդրեա, վեր հանէ մարմնիդ դաստակներուդ ուժովը մինչեւ մի աստիճան, յետոյ թող ձեռներդ մին եւ նոյնով բռնէ զուս յաջորդ աստիճանը, մինչդեռ միւս բաղուկդ նեցուկ կը լինի մարմնոյդ, երբ վերի աստիճանը ժամանէ մի ձեռնդ, միւսն ալ դիւր նոյն աստիճանին վրայ, եւ այս եղանակաւ զնս՝ մինչեւ սանդղին զազաթը:

Վար իջնելու համար միւսնոյն շարժմանց հակադարձն ըրէ:


Ուսանողաց խտրել կը պատուիրեմ զի թէ ելնելու եւ թէ իջնելու ժամանակ, մի աստիճանէն միւս անցնին առանց ցնցման, մարմնին ուղիղ եւ սրունքներն ալ իրարու կից բռնելով:

Շարայարեյի

ՅՈՎԸ. Վ. ԱՃԷՄԵԱՆ

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՅՈՎԱԷՓ ՇԷՂԵԱՆ



ՊԱՏԿԵՐ տասն և հինգ օրը մի անգամ կը հրատարակուի:

Բաժանորդագրութեան տարեկան գինն է
Կ. Պոլսոյ համար 40 դանեկան
Գաւառաց և օտար երկիրներու համար
քրթատարի ծախսն ի միասին հաշուելով 50 « «

Իւրաքանչիւր թիւ 2 դանեկան

ՊԱՏԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերա, Նեշիլ փողոց
Թիւ 1, ուր պէտք է դիմել բաժանորդագրութեան և քերթին
վերաբերեալ այլ ամենայն խնդրոց համար:

RÉDACTION DU **BADGUERE**

Constantinople, Péra, rue YÉCHIL N ° 1

معارف نظارت جایه سنك رخصتیه طبع اولتمشدر